Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
երկրորդ գումարման հոգաբարձուների խորհրդի՝
2021 թ. ապրիլի 14-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի

ք. Երևան 14.04.2021 թ.

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2020 թ. օգոստոսի 7-ի № 910-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 17-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Նիստը նախագահում էր Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանը, քարտուղարում՝ Խ. Աբաջյանը:

Մ. Մալխասյանը նիստի սկզբում բացատրեց, որ առաքվել է ապրիլի 1-ին նախատեսված նիստի նույն օրակարգը, քանի որ Խորհրդի աշխատակարգի 5.2 կետի համաձայն՝ քվեակազմի բացակայության պատճառով հետաձգված նիստը նույն օրակարգով է գումարվում: Նա նաև տեղեկացրեց, որ Խորհրդի 15 անդամներ իրենց լիազորություններից ազատվելու դիմումներ են ներկայացրել, ինչի մասին տեղեկատվությունը տրամադրել է ԿԳՄՍ նախարարի խորհրդական Ա. Անդրիկյանը: 15 անդամներից միայն երկուսն են ներկայացրել հիմնավորում, թե ինչու են դադարեցնում իրենց լիազորությունները:

ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ Կ. Խաչատրյանն առաջարկեց քննարկել Խորհրդի անդամությունից հրաժարված անդամների պահվածքը և հանդես գալ հայտարարությամբ: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

ՀՀ ֆոնդային բորսայի ՏՏ բաժնի ղեկավար Ա. Քերոբյանն առաջարկեց օրակարգում ներառել Խորհրդի նախագահի ընտրության հարցը: Այս առիթով իրենց տեսակետը հայտնեցին ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի վարիչ Ն. Խաչատրյանը, ԵՊՀ դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի պրոֆեսոր Ա. Զուբարյա-

նը, ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ Մ. Սողոմոնյանը, ինչպես նաև Կ. Խաչատրյանը և Խ. Աբաջյանը: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4:

Ա. Քերոբյանը նաև անհրաժեշտ համարեց, որ Խորհրդի կազմից դուրս գալու դիմումները պետք է քննարկել և քվեարկությամբ դադարեցնել հրաժարական ներկայացրած անձանց անդամակցությունը, քանի որ նման իրավասություն Խորհրդի աշխատակարգը վերապահում է միայն Խորհրդին: ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը նշեց, որ նախորդ օրը գրություն է ուղարկել ՀՀ կառավարություն՝ տեղյակ պահելով, որ 30-օրյա ժամկետում պետք է նշանակել Խորհրդի 15 նոր անդամներ: Ա. Քերոբյանը պարզաբանեց, որ Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման որոշում չկա, և ռեկտորի կողմից գրությունը, փաստորեն, շուտ է ուղարկվել: Գ. Գևորգյանը հավելեց, որ կա նախադեպ, երբ իրենց լիազորությունները դադարեցնելու դիմում էին ներկայացրել Խորհրդի նախկին նախագահ Գ. Մուրադյանը և ևս 3 անդամներ, որոնց փոխարեն նշանակվել են նոր անդամներ՝ առանց Խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունման: Ա. Քերոբյանը պարզաբանեց, որ որոշման կայացումը կարևոր է, քանի որ օրակարգում կան հարցեր, որոնք հաստատելու համար անհրաժեշտ է ոչ միայն ներկա անդամների ձայների մեծամասնությունը, այլև Խորհրդի ամբողջ կազմի ձայների մեծամասնությունը: Դիմում գրած անդամների լիազորությունները դադարեցնելու հարցն օրակարգում ներառելու առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 2, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 14: Քվեարկությունից հետո նա ասաց, որ այդ դեպքում կդադարեցնի մասնակցությունը նիստին, ինչը ենթադրում է քվեակազմի բացակայություն և նիստի դադարում: Նա իր առաջարկի համար ներկայացրեց հավելյալ հիմնավորումներ և խնդրեց հարցը նորից դնել քվեարկության. կողմ՝ 15, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1:

ԵՊՀ ՈՒԽ նախագահ Դ. Ափոյանն առաջարկեց օրակարգում ընդգրկել Խորհրդի 20.07.2019 թ. № 57 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում ընդունելու հարցը, որովհետև որոշումը տևական ժամանակ ԵՊՀ-ին դատական գործընթացների մեջ է ներքաշել՝ իրավական ընթացակարգերի խախտմամբ ընդունված լինելու պատճառով: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:

Այնուհետև քվեարկության դրվեց նիստի ամբողջական օրակարգը՝ ներառյալ նախապես ծանուցված հարցերը. կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:

1. 2019-2020 ուստարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում և 2016-2020 թթ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրով 2019-2020 ուստարում նախատեսված աշխատանքների կատարողականի հաստատում:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարման հաստատում:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի ընտրության՝ հայտարարված մրցութային գործընթացի վերաբերյալ որոշման կայացում:
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի թափուր պաշտոնի համար մրցութային գործընթացի կազմակերպում:
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության՝ հայտարարված մրցութային գործընթացի վերաբերյալ որոշման կայացում:
6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցութային գործընթացի կազմակերպում:
7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:
8. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 20.07.2019 թ. № 57 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման կայացում:
9. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմից դուրս գալու վերաբերյալ անդամների դիմումների քննարկում:
10. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդում ստեղծված իրավիճակի վերաբերյալ հայտարարության ընդունում:
11. Ընթացիկ հարցեր:

1. 2019-2020 ուստարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում և 2016-2020 թթ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրով 2019-2020 ուստարում նախատեսված աշխատանքների կատարողականի հաստատում: Գ. Գևորգյանն իր ելույթում նշեց, որ 2019-2020 ուստարում ԵՊՀ 100-ամյակի առիթով տեղի են ունեցել գիտակրթական, մարզամշակութային և այլ բնույթի բազմաթիվ միջոցառումներ: Հաշվետու ժամանակաշրջանն առանձնահատուկ էր նաև 2020 թ. սկզբներից բռնկված կորոնավիրուսային համավարակով, ինչի պատճառով մարտի կեսից ուսուցման գործընթացն իրականացվում է հեռավար (առցանց) եղանակով:

Նա նշեց, որ հաշվետու ուստարում մեկնարկել է ԵՊՀ շուրջ 100 մագիստրոսի կրթական ծրագրերի մշտադիտարկումը, որի արդյունքների վերաբերյալ Որակի ապահովման կենտրոնը զեկույց է ներկայացրել ԵՊՀ գիտական խորհրդին: Բակալավրի վերանայված ծրագրերի մշտադիտարկումը նախատեսված է 2021-2022 ուստարվանից:

Գ. Գևորգյանը տեղեկացրեց, որ 2019-2020 ուստարում ԵՊՀ բակալավրիատի առկա ուսուցման համակարգում ուսանողների թիվը եղել է 8921, հեռակա ուսուցման համակարգում՝ 2205, մագիստրատուրայում՝ 1990 և 536, ասպիրանտուրայում՝ համապատասխանաբար 118 և 253: Կիրառված զեղչերի գումարը կազմել է 387.8 մլն դրամ:

Ռեկտորի պաշտոնակատարը նշեց, որ շարունակվել են դասավանդման, ուսումնառության և գնահատման բարելավմանը միտված գործընթացները: «ERASMUS+ PRINTeL» նախագծի շրջանակում ԵՄ երկրներում վերապատրաստվել են 16 դասախոսներ՝ ակտիվ ուսուցման նորարարական տարբեր մեթոդներով աշխատելու համար: Նրանց կողմից վերապատրաստվել են ԵՊՀ 260 դասախոսներ, իսկ դասախոսների վերապատրաստման նոր դասընթացների ներդրումից և կանոնավոր իրականացումից հետո՝ ևս շուրջ 500 դասախոսներ:

Գ. Գևորգյանը կարևոր համարեց նշել, որ վերջին հինգ տարիներին «Web of Science» շտեմարանում ինդեքսավորվել են ԵՊՀ աշխատակիցների 1382 հոդվածներ, որոնք մեջբերվել են 6102 անգամ՝ 5419 տարբեր հրապարակումներում: 2019-2020 ուս-

տարում ԵՊՀ աշխատակիցները հրապարակել են 1016 հոդված (այդ թվում՝ ազդեցության գործակցով պարբերականներում՝ 187, «Web of Science»-ում՝ 238, «Scopus»-ում՝ 235), 36 մենագրություն, գիտաժողովի 241 նյութ:

Ռեկտորի պաշտոնակատարը տեղեկացրեց, որ ԵՊՀ 7 ֆակուլտետների կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում փորձնական եղանակով ներդրվել է հետազոտական բաղադրիչ, որի նպատակն է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել մասնագիտական հմտությունների զարգացմանը: Առաջին կիսամյակի ընթացքում փորձնական ծրագրի արդյունքները վերլուծելու նպատակով կատարվել է մշտադիտարկում, որը հնարավորություն է տվել վերհանելու այս գործընթացի թույլ և ուժեղ կողմերը, ինչի հիման վրա մշակվել է հետազոտական աշխատանքի կատարման կարգ: 2020-2021 ուստարվանից հետազոտական բաղադրիչը պարտադիր է դարձել կրթական բոլոր ծրագրերում:

Գ. Գևորգյանը ներկայացրեց նաև միջազգային համագործակցության, ենթակառուցվածքների արդյունավետ կառավարման և ուսանողական կառույցների զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Այնուհետև ռեկտորի պաշտոնակատարը պատասխանեց հաշվետու զեկույցի տարբեր ուղղությունների վերաբերյալ Խորհրդի անդամներ Մ. Սողոմոնյանի, Ա. Քերոբյանի, Հ. Վարդումյանի և Կ. Խաչատրյանի հարցերին:

Գ. Գևորգյանի տարեկան գործունեության հաշվետվության հաստատումը դրվեց քվեարկության. կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 3-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 3-րդ ենթակետով, լսելով 2019-2020 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության վերաբերյալ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գրիգորի Գևորգյանի հաշվետվությունը՝

1. Հավանություն տալ 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հաշվետվությանը:

2. Հավանություն տալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով 2019-2020 ուստարում նախատեսված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հաշվետվությանը:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019-2020 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարման հաստատում: ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը զեկուցեց, որ կանոնադրական փոփոխության նախագիծը նախապես առաքվել է Խորհրդի անդամներին և պայմանավորված է օրենսդրական փոփոխություններին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Հարցը դրվեց քվեարկության. կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 15-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 15-րդ ենթակետով՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության (հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թ. նոյեմբերի 2-ի թիվ 1408-Ն որոշմամբ) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնադրության 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

‘4. ԵՊՀ-ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես

եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է (այսուհետ՝ լիազոր մարմին)։’:

2) Կանոնադրության 18-րդ կետի 13-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

‘13) իրեն օգտագործման իրավունքով տրամադրված գույքը հանձնելու վարձակալության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե։’:

3) Կանոնադրությունը լրացնել 20.1.-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

‘20.1 ԵՊՀ-ին անհատույց օգտագործման տրամադրված գույքն ուղղակի ձևով, մրցույթով կամ աճուրդով վարձակալության տրամադրման նպատակով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը, ռեկտորի առաջարկությամբ, հայտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե, որը պետք է ներառի՝

1) գույքի վարձակալության տրամադրման հիմնավորումը, սահմանափակումները և վարձակալության տրամադրվող գույքի օգտագործման նպատակը.

2) վարձակալության տրամադրվող գույքի նկարագիրը՝ ներառյալ գտնվելու վայրը, մակերեսը, հարկը, վիճակը և վարձակալության առաջարկվող ժամկետը՝ համապատասխան հիմնավորմամբ.

3) վարձակալության տրամադրվող անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության տրամադրվող տարածքի հատակագիծը.

4) առկայության դեպքում՝ վարձավճարի չափի վերաբերյալ առաջարկությունը.

5) վարձակալության տրամադրվող գույքի ամսական վարձավճարի շուկայական գնահատված արժեքը՝ ըստ գնահատման մասին հաշվետվության.

6) առկայության դեպքում՝ դիմումատուի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հայտի քննարկումը և որոշման կայացումն իրականացվում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

Սահմանված կարգով վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: ՀՀ ֆինանսների նախարարությունը տվյալ բյուջետային տարվա վերջում տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից տրամադրում է լիազոր մարմնին ԵՊՀ-ին փոխանցելու համար, որպես ԵՊՀ-ի կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում:’:

4) Կանոնադրությունը 42.-րդ կետը լրացնել 16.1.-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

‘16.1) ԵՊՀ-ին անհատույց օգտագործման տրամադրված գույքը ռեկտորի առաջարկությամբ ուղղակի ձևով, մրցույթով կամ աճուրդով վարձակալության տրամադրման հայտի ներկայացումը.’:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Այնուհետև հայտնի դարձավ, որ Ա. Չուբարյանն այլևս չի կարող մասնակցել նիստի օրակարգային մյուս հարցերի քննարկմանը, հետևաբար, հիմք ընդունելով քվեակազմի փաստացի բացակայությունը, առաջարկվեց հայտարարել ընդմիջում մինչև ապրիլի 15-ը՝ ժամը 17:00-ն: Քանի որ ընդմիջման ընթացքում Ա. Չուբարյանը Խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ տևական ժամանակ չի կարող մասնակցել Խորհրդի աշխատանքներին, հետևաբար քվեակազմի բացակայության պատճառով նիստը հաջորդ օրը չշարունակվեց:

Խորհրդի նիստը նախագահող՝ **Մ. Մալխասյան**

Խորհրդի նիստը քարտուղարող՝ **Խ. Աբաջյան**